

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

9-րդ դասարանի ավարտական քննական աշխատանքի կառուցվածքն ու գնահատման չափանիշները

«Մաթեմատիկա» առարկայի 2016 – 2017 ուստարվա հիմնական դպրոցի ավարտական քննական աշխատանքը բաղկացած է 32 առաջադրանքներից:

1 - 18 առաջադրանքներն ընտրովի պատասխանով առաջադրանքներ են՝ նպատակաուղղված աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված նվազագույն պահանջներին: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Աշակերտը պետք է ճիշտ պատասխանը նշի ձևաթղթում «X» նշումով:

19 - 29 առաջադրանքները կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց միջոցով ստուգվում են աշակերտի ծանոթ կամ փոքր-ինչ փոփոխված իրավիճակում գիտելիքների օգտագործման կարողությունները: Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը, առանց չափման միավորի անցկացնում ձևաթղթի համապատասխան մաս:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ ընտրովի, մեկը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

30 - 32 առաջադրանքներն ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ստացած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացվի լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո նշված տեղում:

1 - 29 առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

30 - 32 առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր: Գնահատման քայլը 1 միավոր է:

Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է: